

Կենտրոնական բանկում այսօր տեղի է ունեցել 2013 թ. տարեմուտի ավանդական ընդունելություն, որին ներկա են գտնվել Կառավարության անդամներ, ՀՀ ֆինանսական համակարգի, միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչներ, այլ պաշտոնատար անձինք:

ԿԲ նախագահ Արթուր Զավադյանը, ողջունելով հյուրերին, նշել է, որ 2013 թ-ի տարեսկիզբը բնութագրվել է ցածր և կայուն գնաճային միջավայրով, տնտեսական բարձր ակտիվությամբ, սակայն էներգակիրների գների փոփոխությունն էապես փոխել է մակրոտնտեսական քաղաքականության միջավայրը:

Նա ասել է, որ Կենտրոնական բանկը՝ գնահատելով գների կայունության վրա այդ շուկի ազդեցությունները, ճկուն կերպով արձագանքել է, մի դեպքում տոկոսադրույքի բարձրացման միջոցով՝ հնարավոր երկրորդային ազդեցությունները մեղմելու և սպասումները չեզոքացնելու ուղղությամբ, մյուս դեպքում՝ տոկոսադրույքի շարունակական իջեցման միջոցով՝ երբ արդեն արձանագրվել է գնաճային միջավայրի մեղմացում և տնտեսական ակտիվության նվազում:

Արթուր Զավադյանն ասել է, որ 2013 թ. ավարտվում է 6%-ից ցածր գնաճով, ինչը էներգակիրների սակագների փոփոխության, վերջինիս անուղղակի ազդեցությունների ներքո կարելի է համարել ձեռքբերում:

ԿԲ նախագահը տարվա ձեռքբերումների թվում նշել է նաև ֆինանսական համակարգի կայունության ամրապնդումը. համակարգը տարին ամփոփել է դրական արդյունքներով, իսկ հիմնական ցուցանիշների գծով ապահոված աճերի արդյունքում 2013 թ-ին տնտեսությունում շարունակվել է խորանալ իրական և ֆինանսական հատվածների ինտեգրումը: Ներկա դրությամբ ֆինանսական համակարգի ակտիվների մեծությունը կազմում է ՀՆԱ-ի 74%-ը, իսկ վարկերի մեծությունը՝ 43%-ը, մինչդեռ ընդամենը 5 տարի առաջ՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խորը փուլում, այս ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար 30% և 18%՝ այսօրվա մակարդակից գրեթե 2.5 անգամ ցածր:

Կենտրոնական բանկի ղեկավարն ընդգծել է, որ այս դրական զարգացումներն արդյունք են վերջին 5 տարիների ծրագրային բարեփոխումների, նշել դրանցից մի քանիսը: Մասնավորապես ընդգծել է, որ դրամավարկային գործիքների կիրառման մոտեցումների փոփոխության, մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքների միջակայքի նվազեցման, բաց շուկայում Կենտրոնական բանկի գործառնությունների ակտիվացման և Կառավարության հետ կոորդինացված քաղաքականության արդյունքում ներկայումս ունենք ֆինանսական շուկայի տոկոսադրույքների ավելի ցածր և կայունացող մակարդակներ:

Ընդգծվել է նաև սոցիալական վարկային (հիփոթեքային, սպառողական, ուսանողական գյուղատնտեսական և այլն) ծրագրերի իրականացմանն ուղղված Կենտրոնական բանկի ակտիվ աջակցությունը: Կառավարության հետ իրականացվել է գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորման ծրագիրը, որի շրջանակում տրամադրվել են սուբսիդավորված ցածր տոկոսադրույքներով գյուղվարկեր, որը շարունակվել է նաև այս տարի:

Ներկայումս իրականացվում են «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին, գիտնականներին, ստեղծագործական միությունների անդամներին, լրագրողներին, բժիշկներին, մանկավարժներին, սպորտսմեններին» ծրագրերը, իսկ 2013 թ-ին մեկնարկել են «Մատչելի բնակարան երիտասարդ մասնագետներին», «Սպառողական վարկեր՝ զինծառայողներին» և «Մատչելի ուսանողական վարկեր» պետական նպատակային ծրագրերը:

ԿԲ նախագահը հիշատակել է այս տարիներին ինստիտուցիոնալ նշանակության բարեփոխումների շարունակականության մասին: Վերջիններիս թվում նա նշել է ԱՊՊԱ

համակարգի ներդրումը, որն այսօր սահուն կերպով լուծում է իր առաքելությամբ ստանձնած սոցիալական խնդիրները: Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում են գտնվել նաև կենսաթոշակային բարեփոխումները, որի շրջանակում ակտիվ բանակցություններ են վարվել միջազգային բարձր հեղինակություն ունեցող ակտիվների կառավարիչների հետ: Արդյունքում ֆրանսիական «Ամունդի» ընկերությունը «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ» բանկի հետ համատեղ և ավստրիական «Ցե-Կվադրատ Ամպեգա» ընկերությունը գերմանական «Տալանքս» ընկերության հետ համատեղ հիմնադրել են կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարիչներ, որոնց մուտքը հայկական շուկա մեծ ձեռքբերում է:

Ամփոփելով, Արթուր Զավադյանն ասել է, որ վերջին 5 տարիների ընթացքում արձանագրվել է վարկերի կտրուկ աճ՝ 615 մլրդ դրամից այն հասել է 1 տրլն 700 մլրդ դրամի, 3-ից 4 տոկոսային կետով նվազել են վարկերի տոկոսադրույքները, մեծացել է ֆինանսական ծառայություններից օգտվելու հասանելիությունը, խորացել է տնտեսությունում ֆինանսական միջնորդությունը: Նշել է նաև, որ բանկերում օրեցօր ամրապնդվում է կորպորատիվ կառավարման մշակույթը, իսկ հասարակության մոտ՝ ֆինանսական գրագիտության և ֆինանսական ծառայություններից օգտվելու մշակույթը: Հասարակության մոտ մեծացել է ֆինանսական համակարգի նկատմամբ վստահությունը, ինչի արդյունքում ավանդների ծավալը 2008 թ-ի տարեվերջի 450 մլրդ դրամից այսօր հասել է 1 տրլն 450 մլրդ դրամի:

Շնորհավորելով ներկաների գալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը, ԿԲ նախագահը վստահեցրել է, որ Կենտրոնական բանկի կողմից տարվող աշխատանքները շարունակական են լինելու, ու կառույցն արդյունավետ աշխատելու բարձր պատրաստակամությամբ է մուտք գործում 2014 թ.:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am